# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

***Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝***
Պապին Վարդանյան, Սեդրակ Սաֆարյան, Էդիկ Բաբախանյան, Սամվել Գարսեվանյան, Րաֆֆի Գասպարյան, Մարոզ Սարիբեկյան

***Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը***

***Նիստը արձանագրում էր՝ Մարոզ Սարիբեկյանը***

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 17 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 17 հերթական նիստի օրակարգը
1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի տեղակալների և հայեցողական պաշտոնների քանակը սահմանելու մասին
4.Արման Միքայելյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին
5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու և հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին
6.Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
7.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և համայնքի

սեփականություն ճանաչված գույքը օտարելու և օգտագործման տրամադրելու մասին
8.Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանման մասին
9.Ակունք համայնքի ավագանու հերթական նիստ հրավիրելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐՈՂ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, համայնքի ավագանին որոշում է՝

1.Ընդունել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի ։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից ։

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96/

Լսեցին
***ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐՈՂ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/***

Համաձայն<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 66-րդ հոդվածի և այն սկզբունքին համապատասխան,որ ավագանու մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում,համայնքի ավագանին որոշում է՝

1.Ստեղծված համարել Ակունք համայնքի ավագանու հետևյալ խմբակցությունները՝
1)<<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցություն,
2) <<Համախմբում դաշինք>>Խմբակցություն:
2.Ավագանու առաջիկա նիստին համայնքի ղեկավարին ներկայացնել խմբակցությունների կանոնադրությունը,անվանումը,կազմը,ղեկավարի և քարտուղարի անունները,ազգանունները:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97/

Լսեցին
***ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԱՐՈՋ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/*

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի տեղակալների և հայեցողական պաշտոնների քանակը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից,իսկ վարձատրությունը կատարել գործող հաստիքացուցակի համաձայն,մինչև նոր հաստիքացուցակի ուժի մեջ մտնելը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98/

Լսեցին
***ԱՐՄԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԱՐՈՋ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/*

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակել Արման Միքայելյանին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐՈԶ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/***

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, հիմք ընդունելով համայնքի ավագանու<<Կանոնակարգ>>-ի 20- 24-րդ կետերը, համայնքի ավագանին որոշում է՝

1.Ստեղծել Ավագանու մշտական գործող երեք հանձնաժողովներ՝

1) զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային,տնտեսական հարցերի

2)քաղաքաշինության, հողօգտագործման, անշարժ գույքի, բնակավայրերին,ենթակառուցվածքներին առնչվող հարցերի

3)կրթության, մշակույթի, սոցիալական և իրավական հարցերի,

1.Հաստատել Ավագանու մշտական գործող հանձնաժողովների անհատական կազմերը:

ա) զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային,տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.

բ) քաղաքաշինության, հողօգտագործման, անշարժ գույքի, բնակավայրերին, ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով.

գ) կրթության, մշակույթի, սոցիալական և իրավական հարցերի մշտական հանձնաժողով.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100/

Լսեցին

***[illegible] ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն«Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 15-րդ մասի«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի29-ի թիվ 1918-Ն որոշումը,միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները, համայնքի ավագանին որոշում է

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101/

Լսեցին

***ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ, 67-րդ ,71-րդ և 76-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել.
   1)աճուրդ-վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ համաձայն հավելված 1-ի,
   2)ուղղակի վաճառքով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 2-ի,
   3) հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը փոխանակության միջոցով համաձայն հավելված 3-ի
   2.Համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարել ինքնակամ շինությունը կառուցողին ուղղակի վաճառքով և ուղղակի վաճառքի գին սահմանել համաձայն հավելված 4-ի
   3.Տրամադրել վարձակալության կամ կառուցապատման իրավունքով համաձայն հավելված 5-ի
   Յամայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102/

Լսեցին

*ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 22-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է՝

1.Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտները անվանել համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103/

Լսեցին

*ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԱՐՈՋ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/*

Համաձայն«Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 62-րդ հոդվածի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի ավագանու հերթական նիստ հրավիրել սույն թվականի դեկտեմբերի 28-ին ժամը 15:00-ին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104/

Ավագանու անդամներ

ԱՐՏՅՈՄ ԱՃԻՋՅԱՆ

ՄԱՐՋԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԱԶԻԶՅԱՆ

ՄԱՐՋԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԼԱՐԻՍԱ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՎՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՂԻԱԶԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԱՔՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ԳՈՌ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ ______________

*Նիստն արձանագրեց՝* ______________